Սենիկ Կարապետի Խուբեսարյան

Ծնվել է 1977 թվականի ապրիլի 28-ին, Լենինականում:

1984-1994 թվականներին սովորել և ավարտել է Սերգո Օրջոնիգիձեի անվան թիվ 14 միջ. դպրոցը:

1997-1999 թվականներին պարտադիր զինվորական ծառայության է անցել ռուսական 102–րդ ռազմաբազայում:

2003 թվականից աշխատում է Գեղագիտության ազգային կենտրոնում որպես պարուսույց:

2005 թվականին Գյումրու մանկապատանեկան արվեստի պալատում հիմնել է «Անի» պարային համույթը: Մինչ օրս հանդիսանում է այդ համույթի գեղարվեստական ղեկավարը:

2006-2019 թվականներին աշխատել է ՀՀ մշակույթի նախարարության «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոնում» որպես «Թռչյունյան տուն» պարային համույթի գեղարվեստական ղեկավար:

2009-2012 թվականներին ընդունվել և ավարտել է Գյումրու «Կարա-Մուրզայի» անվան պետական երաժշտական քոլեջի պարարվեստի բաժինը:

2013-2017 թվականներին ընդունվել և ավարտել է Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի պարարվեստի բաժինը:

Ներկայումս սովորում է Մ.Նալբանդյանի անվան Շիրակի պետական համալսարանի հումանիտար գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմության բաժնի առաջին կուրսում:

2021 թվականի դեկտեմբեր ամսից հանդիսանում է Գյումրու համայնքապետարանի «Բալասանյան դաշինք» խմբակցության ավագանու անդամ:

Ամուսնացած է, ունի երկու զավակ: